ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 582 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի N 530-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՎՀՀ՝ 07610657) կողմից կնքված՝ ստորև նշված եռակողմ պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի օգոստոսի 3-ի «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Բնապահպանական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N 530-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գևորգ Աղաջանյան» անհատ ձեռնարկատերի հետ (ՀՎՀՀ՝ 72210408) 2023 թվականի հունիսի 27-ին կնքված՝ N ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԾՁԲ-23/02 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցում՝ 4,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մաքս Օիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02662703) 2023 թվականի հուլիսի 24-ին կնքված՝ N ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-23/02 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դիզելային վառելիքի (ամառային) ձեռքբերում՝ 4,030,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Գազ-Մարկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 04239009) 2023 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ N ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-23/04-1 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գարու, եգիպտացորենի, գազարի, բազուկի և կենդանիների համար նախատեսված կերի ձեռքբերում՝ 3,125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Ա-Տեգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 07905651) 2023 թվականի օգոստոսի 2-ին կնքված՝ N ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-23/05 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սեղմված բնական գազի ձեռքբերում՝ 5,750,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

30.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ